Կարիերայի և պրակտիկայի կենտրոնի ծրագրերը

Նախատեսվում է ընդլայնել և ակտիվացնել ինստիտուտի գովազդարշավը՝ ԶԼՄ-ների միջոցով, տարածել տեղեկատվություն ԵԹԿՊԻ-ի վերաբերյալ, օգտագործել ԶԼՄ-ներն ու համացանցի հնարավորությունները, ստեղծել ԵԹԿՊԻ–ի էլեկտրոնային թերթ և վեբ հեռուստատեսություն:

Կարիերայի և պրակտիկայի կենտրոնը մտադիր է ծավալել գործունեություն հանրակրթական դպրոցներում: Կազմակերպել ուսումնական մասնագիտական պրակտիկաներ: Ուսանող ռեժիսորների, դերասանների, օպերատորների ուժերով նախատեսվում է ստեղծել դպրոցներում խմբակներ ու ակումբներ, իրականացնել բեմադրություններ և այլ միջոցառումներ:

Կարիերայի և պրակտիկայի կենտրոնը պլանավորում է համագործակցություն հանրապետության մարզերում տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ինստիտուտի շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու հարցում:

Նախատեսվում է ուսանողներին, շրջանավարտներին մշտապես իրազեկ պահել թափուր աշխատատեղերի, կամավորական աշխատանքների, վերապատրաստումների, կրթաթոշակների վերաբերյալ: